ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 69

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

09-ը դեկտեմբերի 2023թ.

Նիստին ներկա էր գիտական խորհրդի 35 անդամներից 29-ը:

Նիստը վարում էր գիտական խորհրդի նախագահ Ա. Հ. Մակարյանը, նիստի քարտուղարն էր Մ. Ս. Աթոյանը:

Գիտական խորհրդի նախագահ Ա. Հ. Մակարյանը բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Հաղորդում ԵՊՀ ԻՄ 2023թ.-ի ընդունելության արդյունքների մասին (առկա և հեռակա ուսուցում):
   /Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար **Ա. Մակարյան** /
2. ԵՊՀ ԻՄ-ի 2023թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջե) հունվար-նոյեմբեր կատարողականի մասին:
   /Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի գլխավոր հաշվապահ **Մ. Մխիթարյան** /
3. ԵՊՀ ԻՄ-ի 2024թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջե) մասին:
   /Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի գլխավոր հաշվապահ **Մ. Մխիթարյան** /
4. ԵՊՀ ԻՄ-ի արտաքին շահակիցների 2022-2023թ. կարծիքների ուսումնասիրությունը շրջանավարտների վերաբերյալ:
   /Զեկուցող ԵՊՀ ԻՄ ՊԿՇՀ բաժնի վարիչ **Լ. Բեգինյան**/
5. ԵՊՀ ԻՄ 2018-2023թթ. գործունեության արդյունքային ցուցանիշների ներկայացում:
   /Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի ՄԿՈԱ բաժնի վարիչ **Մ. Ճաղարյան** /
6. Ընթացիկ հարցեր:
   6.1. ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի շահակիցների կարիքների վերհանման և գնահատման» կարգը հաստատելու մասին:
   /Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի ՄԿՈԱ բաժնի վարիչ **Մ. Ճաղարյան** /
   6.2. ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի մասնագիտության կրթական ծրագրերի բենչմարքինգի իրականացման կարգը» հաստատելու մասին:
   /Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար **Ա. Մակարյան** /
   6.3. ԵՊՀ ԻՄ ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի դոցենտ, ֆ.մ.գ.թ. Սերգեյ Ամիրխանի Ազարյանի հեղինակած «Օպտիմիզացիայի մեթոդներ» ուսումնական ձեռնարկը հրատարակման երաշխավորելու մասին:
   /Զեկուցող ԵՊՀ ԻՄ գիտական քարտուղար **Մ. Աթոյան**/

Բաց քվեարկությամբ՝ 29 կողմ 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց

Որոշում

- Հաստատել նիստի օրակարգը:

Օրակարգի առաջին՝ «Հաղորդում ԵՊՀ ԻՄ 2023թ.-ի ընդունելության արդյունքների մասին (առկա և հեռակա ուսուցում)» հարցի կապակցությամբ լսեցին ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար **Ա. Մակարյանի** հաղորդումը:

Նա նշեց, որ 2023-2024 ուստարում նկատելի է դիմորդների ընդհանուր թվի նվազում, ինչպես նաև ընդունելության քննությունների նվազագույն շեմը հաղթահարած դիմորդների թվի որոշակի նվազում՝ նախորդ երեք ուստարիների (2020-2021, 2021-2022, 2022-2023) համեմատությամբ: Առկա ուսուցման համակարգում ավելի է խորանում դպրոցների շրջանավարտների գիտելիքների և ընդունելության քննությունների համար նախատեսված պահանջների միջև տարբերությունը, իջնում է դիմորդների գիտելիքների մակարդակը: Այդ ամենի հետևանքով ավելի մեծ թվով դիմորդներ չեն հաղթահարում նվազագույն շեմը: Հեռակա ուսուցման համակարգում իրավիճակը պայմանավորված է ընդունելության քննությունների կազմակերպման ձևի փոփոխությամբ ու Գնահատման և թեստավորման կենտրոնի կողմից հանձնարարվող քննական առաջադրանքների բարդությամբ: Մասնավորապես նվազել են «Հայոց լեզու և գրականություն» և «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրերով դիմորդների և ընդունվողների թիվը՝ ունենք 5 անվճար տեղ 6 ընդունված ուսանող ՏՄՄ մասնագիտությամբ, որը շատ անհանգստացնող է, վիճակը բավարար է «ֆինանսներ» և «Զբոսաշրջություն» կրթական ծրագրերով, սակայն վերջին նշված մասնագիտությամբ դիմորդների մոտ 50 տոկոսը կտրվում են, այստեղ ցածր է նաև ընդունելության շեմը: Առաջընթաց կա «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտությամբ. ընդունվում են որակյալ ուսանողներ, «Ֆրանսերեն լեզու և գրականություն» մասնագիտությամբ. ունենք 4 հոգանոց խմբեր, որը ֆինանսապես ձեռնտու չէ: Ա. Մակարյանը նշեց նաև, որ դիմորդների և ընդունվածների բավականին աճ կա «Դեկորատիվ կիրառական արվեստ» և «Դիզայն» կրթական ծրագրերով, հույս ունենք Կիրառական արվեստի ֆակուլտետում նախատեսված ներդրումները նույնպես կավելացնեն դիմորդների աճը:

Ընդունելությանն ավելի մեծ վնաս են հասցնում նաև ոչ պետական բուհերի հետ անհավասար և անազնիվ մրցակցային պայմանները, որոնք իրականացնում են առանց քննությունների ընդունելություն՝ դրանով գրավելով մեծաքանակ դիմորդներ:

Արտահայտվեցին –ԵՊՀ ԻՄ փոխտնօրեն Մ. Օթարյանը, Տնտեսագիտության ֆակուլտետի դեկանի ժ/պ Ա. Մարգարյանը, Կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Վ. Աղաբաբյանը և այլք: Մասնավորապես Մ. Օթարյանը նշեց, որ առավել մտահոգիչ է ընդունելության շեմի իջեցումը, ինչպես նաև առաջարկեց ԵՊՀ օրինակով ավելացնել «Հոգեբանություն» մասնագիտությամբ նախատեսվող տեղերի քանակը: Նա նշեց նաև, որ ունենք նոր կրթական ծրագրերի ներդրման կարիք, մասնավորապես կարող է արդյունավետ լինել «Ռադիոֆիզիկա» կամ «Ֆինանսական մաթեմատիկա» կրթական ծրագրերի ներդրումը:

Բաց քվեարկությամբ, միաձայն՝ 29 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, *որոշեցին.*

ՈՐՈՇՈՒՄ

- ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանի հաղորդումը «Հաղորդում ԵՊՀ ԻՄ 2023թ.-ի ընդունելության արդյունքների մասին (առկա և հեռակա ուսուցում)» հարցի կապակցությամբ ընդունել ի գիտություն:

Օրակարգի երկրորդ՝ «ԵՊՀ ԻՄ-ի 2023թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջե) հունվար-նոյեմբեր կատարողականի մասին» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ-ի գլխավոր հաշվապահ Մ. Մխիթարյանի հաղորդումը:

Մ. Մխիթարյանը ԵՊՀ ԻՄ 2023թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի 11 ամսվա (2023 թ. հունվարի 1-ից դեկտեմբերի 1-ը) կատարողականի վերաբերյալ մասնավորապես նշեց, որ հաշվետու ֆինանսական տարվա մուտքերը (եկամուտները) կազմում են 404.160,6

մլն. ՀՀ դրամ, իսկ ելքերը (ծախսերը) կազմում են 438.992,3 մլն. ՀՀ դրամ: Նախորդ ֆինանսական տարվանից մնացորդը կազմել է 43.170,8 մլն. ՀՀ դրամ:

Մուտքերի 58%-ը (234.498,0 մլն. ՀՀ դրամ) վճարովի ուսուցման ծառայություններից է, իսկ 27%-ը (109.340,0 մլն. ՀՀ դրամ) պետական ֆինանսավորումից: Ելքերի 79.3%-ը (348.054,0 մլն. ՀՀ դրամ) «Աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ և դրան հավասարեցված վճարումներ»-ն են: Ելքերի 2.2%-ը (9.860,0 մլն. ՀՀ դրամ) ուղղվել է ուսանողների կրթաթոշակներին, 7.1%-ը (31.500 մլն. ՀՀ դրամ)՝ Երևանից ժամանող դասախոսներին տեղափոխելու համար նոր միկրոավտոբուսի ձեռքբերմանը: (Մանրամասն տես հավելված 1)

Բաց քվեարկությամբ, միաձայն՝ 29 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, *որոշեցին.*

ՈՐՈՇՈՒՄ

- «ԵՊՀ ԻՄ-ի 2022թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջե) հունվար-նոյեմբեր կատարողականի մասին» հարցի վերաբերյալ գլխավոր հաշվապահ Մ. Մխիթարյանի հաղորդումը ընդունել ի գիտություն:

Օրակարգի երրորդ՝ «ԵՊՀ ԻՄ-ի 2024թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջե) մասին» հարցի կապակցությամբ լսեցին ԵՊՀ ԻՄ-ի գլխավոր հաշվապահ Մ. Մխիթարյանի հաղորդումը:

ԵՊՀ ԻՄ-ի գլխավոր հաշվապահ Մ. Մխիթարյանը նշեց, որ վերջինիս հոդվածների ցուցանիշները կազմվել են 2023 թ. նախահաշվի կատարողականի ցուցանիշների, ինչպես նաև կանխատեսումների և պլանավորման հիման վրա: Նոր բյուջեով նախատեսվում է պրոֆեսորադասախոսական անձնակազմի աշխատավարձի որոշակի բարձրացում, աշխատակիցների առողջության ապահովագրության փաթեթով նախատեսվող ծառայությունների կտրուկ ավելացում, Բնական գիտությունների և Կիրառական արվեստի ֆակուլտետների մասնաշենքի վերանորոգման պետական սուբվենցիոն ծրագրին մասնակցություն, կենտրոնական մասնաշենքի ջեռուցման համակարգի արմատական վերափոխում և բակային տարածքի հիմնանորոգում, Կիրառական արվեստի ֆակուլտետի գույքի համալրում և այլ գործողությունների ֆինանսավորում: Նշված ծրագրերի իրականացմանը ֆինանսական աջակցություն կցուցաբերի նաև Մայր բուհը (տես հավելված 2):

Արտահայտվեցին – ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը, փոխտնօրեն Մ. Օթարյանը, ԵՊՀ պրոռեկտոր Ռ. Բարխուդարյանը և այլք: Մասնավորապես Ա. Մակարյանը նշեց, որ նախորդ տարվա համեմատ բարձրացել է պրոֆեսորադասախոսական կազմի աշխատավարձային ֆոնդը, խոշորացել և էականորեն բարելավվել է ապահովագրական փաթեթը: Ա. Մակարյանը նշեց, որ ԵՊՀ-ն 2024թ.-ին նախատեսում է Մասնաճյուղի վերանորոգման և լաբորատորիաների վերազինման համար ներդնել մոտ 100 միլիոն դրամ, որը լինելու է պարբերական: Նշվեց, որ ծախսեր նախատեսվել է նաև 2024թ. ԵՊՀ ԻՄ-ի 30 ամյակին նվիրված միջոցառումների համար:

Մ. Օթարյանը նշեց, որ ԵՊՀ-ն իրենց հուշանվերները որոշել է պատվիրել Մասնաճյուղի կիրառական արվեստի ֆակուլտետում, որը ենթադրում է լրացուցիչ ֆինանսական մուտքեր, իսկ Մասնաճյուղի ապահովագրական փաթեթը շատ լուրջ փոփոխություններ է կրել, կլինի այն ինչ ունի ԵՊՀ փաթեթը՝ բոլոր հնարավոր ծառայությունները մեջը կան:

Ռ. Բարխուդարյանը նշեց, որ գիտական կոմիտեն դրամաշնորհներ է տրամադրում լաբորատորիաների հիմնման համար, որը շատ լավ հնարավորություն է Մասնաճյուղում գիտական ստորաբաժանում հիմնելու համար:

Բաց քվեարկությամբ, միաձայն՝ 29 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, *որոշեցին.*

ՈՐՈՇՈՒՄ 69/1

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 15-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 15-րդ ենթակետով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1 Հավանություն տալ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի 2024 թվականի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվի նախագծին համաձայն հավելվածի 2-ի:
2 «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի 2024 թվականի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշիվը ներկայացնել ԵՊՀ հաստատման:

Օրակարգի չորրորդ՝ « ԵՊՀ ԻՄ-ի արտաքին շահակիցների 2022-2023թ. կարծիքների ուսումնասիրությունը շրջանավարտների վերաբերյալ» հարցի կապակցությամբ լսեցին ԵՊՀ ԻՄ ՊԿՇՀ բաժնի վարիչ Լ. Բեգինյանի հաղորդումը:

Լ. Բեգինյանը նշեց, որ ուսումնասիրության նպատակն է պարզել արտաքին շահակիցների կարծիքը մասնաճյուղի շրջանավարտների մասնագիտական և անձնային որակների վերաբերյալ: 5-բալային սանդղակով գործատուները գնահատել են Մասնաճյուղի շրջանավարտների տեսական գիտելիքներն ու գործնական հմտությունները, կազմակերպչական ու հաղորդակցական կարողությունները, անձնային-բարոյական որակները, ինքնակատարելագործման դրսևորումը, թիմային աշխատանք կատարելու ունակությունները և այլն: Հարցման արդյունքներն ընդհանուր առմամբ գոհացնող են, ինչը փաստում է, որ Մասնաճյուղը կատարել է և շարունակում է զարգացնել իր առջև դրված գլխավոր ռազմավարական խնդիրներից մեկը, այն է՝ աշխատաշուկային տալ մրցունակ մասնագետներ: Վերջին 3 տարվա համեմատ այս տարվա հարցումների՝ շահակիցների կողմից տրված գնահատականների միջինը զգալիորեն աճել է: Օրինակ, մեր շրջանավարտների տեսական գիտելիքների իմացությանը 4 և 5 գնահատականներ է տվել հարցմանը մասնակցած 63 շահակիցներից 55-ը (87.30%- ը), մասնագիտական պատրաստվածությանը՝ 53-ը (84.12%-ը), և մասնագիտական խոսքին՝ 52-ը (82.53%-ը), որը բավականին բարձր ցուցանիշ է: ԵՊՀ ԻՄ շրջանավարտների հաղորդակցվելու (միջին գնահատականը՝ 4.30), կազմակերպչական որակների (միջին գնահատականը՝ 4.22), քննադատական-վերլուծական (միջին գնահատականը՝ 4.01) և տարբեր իրավիճակներում արագ և ճիշտ կողմնորոշվելու կարողությունների (միջին գնահատականը՝ 4.01)՝ 2023 թ. հարցման արդյունքները նախորդ տարիների համեմատ աճել են: Մեր գործատուներն ընդհանուր առմամբ բավարարված են Մասնաճյուղի շրջանավարտների մարդկային և անձնային որակներից և դա արտահայտել են հիմնականում 4 և 5 գնահատականներով: Հարցմանը մասնակցած 63 գործատուներից 63-ը (100%-ը) իրենց կազմակերպությունում մասնաճյուղի հեղինակությունը գնահատել է 4 և 5 գնահատականներով: Այդ ցուցանիշը վերջին տարիների համեմատ էականորեն աճել է, մասնավորապես նախորդ տարվա համեմատ միջին գնահատականը աճել է 0.36 միավորով: Այն հարցին, թե խորհուրդ կտան մեր շահակիցներն իրենց մերձավորներին և ընկերներին դիմել ԵՊՀ ԻՄ, դրական է պատասխանել հարցման մասնակիցներից 59-ը (93.65%-ը). այս ցուցանիշը ևս աճել է նախորդ տարիների համեմատ: Պրակտիկայի կազմակերպման և շահակիցների հետ համագործակցության բաժինը 2022-2023 և 2020-2022 թթ. հարցման արդյունքների համեմատական վերլուծությունը կտրամադրի ֆակուլտետներին, մասնագիտական ամբիոններին և ուսանողներին (ՈՒԳԸ և ՈՒԽ)՝ ներկա գործընթացներում քննության առարկա դարձնելու արտաքին շահակիցների առաջարկները և կարծիք-գնահատականները՝ ուղղված կրթական ծրագրերի կատարելագործմանը: Ավելի մանրամասն կարող եք տեսնել հավելված 3-ում:

Արտահայտվեցին – ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը, ԵՊՀ ԻՄ փոխտնօրեն Մ. Օթարյանը, ԵՊՀ ԻՄ ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Սիմոնյանը, Տնտեսագիտության ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Ա. Մարգարյանը և այլք:

Արտահայտվողները կարևորեցին այն հանգամանքը, որ բարձրացել է արտաքին շահակիցների կողմից ԵՊՀ ԻՄ-ին տրված գնահատականը, իսկ վերլուծությունը ավելի օգտակար կլիներ, եթե արվեր ըստ մասնագիտությունների կամ ոլորտների:

Բաց քվեարկությամբ՝ 29 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ արդյունքներով, *որոշեցին.*

ՈՐՈՇՈՒՄ

- «ԵՊՀ ԻՄ-ի արտաքին շահակիցների 2022-2023թ. կարծիքների ուսումնասիրությունը շրջանավարտների վերաբերյալ» հարցի վերաբերյալ ՊԿՇՀ բաժնի վարիչ Լ. Բեգինյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:

Օրակարգի հինգերորդ՝ «ԵՊՀ ԻՄ 2018-2023թթ. գործունեության արդյունքային ցուցանիշների ներկայացում» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ-ի ՄԿՈԱ բաժնի վարիչ Մ. Ճաղարյանի հաղորդումը:

Նա գիտխորհրդի անդամներին ներկայացրեց ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի՝ 2018-2023 թթ. գործունեության արդյունքային ցուցանիշների լրակազմը, որն ընդգրկում է Մասնաճյուղի՝ վերջին 5 տարիներին գրանցած արդյունքները և դրանց դինամիկան, փաստում է Մասնաճյուղի ձեռքբերումների և խնդիրների մասին: Մ. Ճաղարյանը նշեց, որ ԳԱՑ-ում յուրաքանչյուր ցուցանիշի համար գրված վերլուծությունում ներկայացված են ձեռքբերված արդյունքները, նրանց հիմնավորումները, իսկ խնդիրների դեպքում՝ պատճառները:

Մ. Ճաղարյանը նշեց, որ վերջին 2 տարիների ԳԱՑ-երի (ԳԱՑ 2017-2022 և ԳԱՑ 2018-23) լրակազմը տարբերվում է նախորդ ԳԱՑ-երից: Մասնաճյուղի՝ 2022-26 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի կատարողականի գնահատման պահանջները բավարարելու և Մասնաճյուղի նախանշած ձեռքբերումները մանրամասն ներկայացնելու համար ՄԿՈԱ բաժնի կողմից վերանայվել և նոր արդյունքներով համալրվել են գործունեության բոլոր 6 ոլորտները (Ընդունելություն և համակազմ, Ուսումնական գործընթաց, Ռեսուրսներ և կառավարում, Ենթակառուցվածքներ, Գիտություն և նորարարություն, Արտաքին կապեր և միջազգային համագործակցություն). ավելացվել են 4 նոր ցուցանիշներ (4.11, 6.1.1, 6.1.2, 6.5) և 35 նոր արդյունքներ: ԳԱՑ-ում ավելացվել են նաև 2 նոր ոլորտներ (Որակի կառավարում և Հասարակական պատասխանատվություն)՝ 6 ցուցանիշներով և 24 արդյունքներով: Ընդգծվեց, որ ներառված նոր արդյունքներից շատերի համար 2021-2022 և 2022-2023 ուստարիների համար մասնաճյուղը ձեռք է բերել որոշակի արդյունքներ: (ԳԱՑ-ը ամբողջությամբ տես հավելված 4-ում):

Արտահայտվեցին – ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը, փոխտնօրեն Մ. Օթարյանը, ԵՊՀ ԻՄ ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Սիմոնյանը և այլք:

Արտահայտվողները կարևորեցին կատարված կատարված աշխատանքը:

Բաց քվեարկությամբ, միաձայն՝ 29 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, *որոշեցին.*

ՈՐՈՇՈՒՄ

- «ԵՊՀ ԻՄ 2018-2023թթ. գործունեության արդյունքային ցուցանիշների ներկայացում» հարցի վերաբերյալ Մ.Ճաղարյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:

Ընթացիկ հարցեր:

6.1 Լսեցին՝ ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի շահակիցների կարիքների վերհանման և գնահատման» կարգը հաստատելու մասին» հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ ՄԿՈԱ բաժնի վարիչ Մ. Ճաղարյանի հաղորդումը:

Մ. Ճաղարյանը նշեց, որ ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի շահակիցների կարիքների վերհանման և գնահատման» կարգը սահմանում է Մասնաճյուղի ռազմավարական նպատակների իրականացման համար շահակիցների գիտակրթական, սոցիալական կարիքների վերհանման մեթոդաբանությունը և մեխանիզմները, կարիքների ուսումնասիրության քայլերը, դրանց գնահատման և հավաքագրված տվյալների վերլուծության մեթոդները, վերհանված կարիքների վերլուծության արդյունքների օգտագործման հնարավորությունները: Այն մշակվել է «Կրթության մասին» ՀՀ օրենքի, ԵՊՀ և ԵՊՀ ԻՄ կանոնադրությունների, «ԵՊՀ ԻՄ-ի կրթական ծրագրերի մոնիթորինգի և վերանայման» կարգի, Կրթության որակի բնագավառում ԵՊՀ ԻՄ-ի քաղաքականության և ԵՊՀ ԻՄ ռազմավարական ծրագրի իրականացման պահանջների հիման վրա: Նախագիծը ամբողջությամբ կարող եք տեսնել հավելված 5-ում:

Արտահայտվեցին – ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը, ԵՊՀ ԻՄ ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչի ժ/պ Գ. Սիմոնյանը: Գրավոր առաջարկներ էր ուղարկել «Տուրիզմի և մշակութաբանություն» ամբիոնի վարիչի ժ/պ Գ. Հովհաննիսյանը, որը մանրամասն ներկայացրեց Մ. Ճաղարյանը:

Մասնավորապես Գ. Սիմոնյանը առաջարկեց հանել 14-րդ կետը, իսկ 21-րդ կետը տանել 17 կետից առաջ:

Այնուհետև բաց քվեարկությամբ, միաձայն՝ 29 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, *որոշեցին.*

ՈՐՈՇՈՒՄ 69/2

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 4-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է՝

1. Հաստատել ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի շահակիցների կարիքների վերհանման և գնահատման» կարգը՝ համաձայն հավելված 5-ի,
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման և հրապարակման պահից:

6.2 **Լսեցին՝** ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի մասնագիտության կրթական ծրագրերի բենչմարքինգի իրականացման կարգը» հաստատելու մասին» հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանի հաղորդումը:

Ա. Մակարյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի մասնագիտության կրթական ծրագրերի բենչմարքինգի իրականացման կարգը սահմանում է ԵՊՀ ԻՄ-ում մասնագիտության կրթական ծրագրերի բենչմարքինգի իրականացման նպատակներն ու խնդիրները, սկզբունքները, տեսակները, մեթոդաբանությունը և իրականացման փուլերը:

Կարգը մշակվել է «Կրթության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ-ում մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների, ԵՊՀ և ԵՊՀ ԻՄ կանոնադրությունների, ԵՊՀ կրթական ծրագրերի հաստատման կարգի, Մասնագիտության կրթական ծրագրերի բարելավման, ուսումնական գործընթացների կազմակերպման և կառավարման առաջավոր փորձի համեմատական վերլուծության (բենչմարքինգի) իրականացման և Կրթության որակի բնագավառում ԵՊՀ ԻՄ-ի քաղաքականությունների հիման վրա: Սույն կարգը նպատակաուղղված է ԵՊՀ ԻՄ-ում ՄԿԾ-ների բենչմարքինգի

իրականացման գործընթացների համակարգմանը, միասնականացմանը և արդյունավետության բարձրացմանը(տես հավելված 6):

Այնուհետև բաց քվեարկությամբ, միաձայն՝ 29 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, *որոշեցին.*

ՈՐՈՇՈՒՄ 69/3

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 4-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է՝

1. Հաստատել ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի մասնագիտության կրթական ծրագրերի բենչմարքինգի իրականացման կարգը» ՝ համաձայն հավելված 6-ի,
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման և հրապարակման պահից:

6.3 **Լսեցին**՝ «ԵՊՀ ԻՄ ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի դոցենտ, ֆ.մ.գ.թ. Սերգեյ Ամիրխանի Ազարյանի հեղինակած «Օպտիմիզացիայի մեթոդներ» ուսումնական ձեռնարկը հրատարակման երաշխավորելու մասին» հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ-ի գիտական քարտուղար Մ. Աթոյանի հաղորդումը:

Նա նշեց, որ Սերգեյ Ամիրխանի Ազարյանի հեղինակած «Օպտիմիզացիայի մեթոդներ» ուսումնական ձեռնարկը հայերենով դասագրքի հրատարկման առաջին փորձն է: Այն ընդգրկում է համալսարանական ծրագրով նախատեսված օպտիմիզացիայի մեթոդներ առարկայի գրեթե բոլոր բաժինները: Ուսումնական ձեռնարկի նպատակն է տալ օպտիմիզացիայի հիմնարար մեթոդների բավարար չափով համակարգված և ժամանակակից շարադրանք և ծանոթացնելու ընթերցողին այդ ալգորիթմների պրակտիկ իրականացումների հետ, որը այս գրքի կարևոր առանձնահատկություններից է: Աշխատանքը գրախոսվել է Վանաձորի պետական համալսարանի մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոնի դոցենտ, տեխնիկական գիտությունների թեկնածու Ս.Հ. Էքսուզյանը, Վանաձորի պետական համալսարանի մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոնի պրոֆեսոր, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր Ռ.Վ. Դալլաքյանը, ԵՊՀ ԻՄ ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի դոցենտ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, դոցենտ Մ.Ա. Զաքարյանը, ՀԱՊՀ կիրառական մաթեմատիկայի և ֆիզիկայի ֆակուլտետի մասնագիտական մաթեմատիկական կրթության ամբիոնի վարիչ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս. Ա. Եպիսկոպոսյանը: Աշխատանքը երաշխավորել է հրատարակման Բնական գիտությունների ֆակուլտետի գիտական խորհրդի կողմից:

Արտահայտվեցին – ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը, Բնական գիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար ֆ.մ.գ.թ. դոցենտ Մ. Զաքարյանը, ԵՊՀ ԻՄ ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Սիմոնյանը և այլք:

Արտահայտվողները նշեցին, որը ձեռնարկը աչքի է ընկնում շարադրանքի հստակությամբ և ապացույցների ճշտությամբ, լուծված օրինակների բազմազանությամբ: Նյութերը ներկայացվում են ամբողջական և բովանդակալից և տրվում են հասկացությունների երկրաչափական մեկնաբանություններ: Շարադրված մեթոդները պրակտիկ են և հեշտ իրագործելի ալգորիթմական լեզուների օգնությամբ: Տեսության և խնդիրների դասակարգման լայն սպեկտրը հնարավորություն է տալիս դասագիրքը օգտագործել ոչ միայն ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետներում, այլև տեխնիկական և տնտեսագիտական բուհերում:

Բաց քվեարկությամբ, միաձայն՝ 29 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, *որոշեցին*

ՈՐՈՇՈՒՄ 69/4

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 17-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 17-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Երաշխավորել հրատարակության Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի դոցենտ, ֆ.մ.գ.թ. Սերգեյ Ամիրխանի Ազարյանի հեղինակած «Օպտիմիզացիայի մեթոդներ» ուսումնական ձեռնարկը։
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից։

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ_____Մ. Ս. ԱԹՈՅԱՆ